



#### 48. ՈՒԽԱՅԸ<sup>1</sup>

Մի մարդ գալիս ա ըլում, որ տղին ըշկոլումը տա: էդ մարդը գնում ա մի ախարից ջուր խմելու, ասում ա.— Ուխա՛յ, էս ինչ անուշ ա:

Որ ասում ա «Ուխա՛յ, էս ինչ անուշ ջուր ա», մի մարդ ախարից դուրս ա գալի:

էդ ախարից դուրս էկած մարդը ասըմ ա.— էդ տղեն ո՞ւր էս տանում:

Ասում ա.— Տանեմ ըշկոլումը տամ:

էդ մարդը տղատիրոջն ասըմ ա.— Ինձի տուր տղեղ, տանեմ կարթացնեմ:

Դա էդ տղին տալիս ա, որ տանի կարթացնի:

Տանում ա կարթացնելու, ինքն աղաքն ա ընկնում, գնում տանում ա մի պռավի տուն:

Պռավն էդ տղին ասում ա.— Քանի,— ասում ա,— սովրիլ ես, ասա չէ, որ ասես՝ սովրիլ եմ, գլուխդ տալ պտի:

Ուխայը քանի տղին ասըմ ա.— Սովրի՞լ էս:

Ասըմ ա.— Չէ՛:

<sup>1</sup> Բնագրում վերնագիրը նշանակված է Ուխայեը, բայց քանի որ հեքիաթի մեջ բոլոր գեպքերում օգտագործվում է Ուխայ, ուղղել ենք—Մ. Կ.:

Հերը գալիս ա ախարի կուշտը ջուր խմելու, խմում ա, ասըմ ա.— Ուխա՛յ, էս ինչ անուշ ջուր ա:

Որ ինքն էսպես ասըմ ա, տղեն Ուխայի հետ ախարից դուս էկան:

Ուխայը, որ տղին դուս ա բերըմ, հորն ասըմ ա.— էս ինչ անպետք տղա ա, որ սվորիլ չգիտա:

էդ մարդը փողն տալիս ա ու իր տղին վեր ըլում տանում: էդ տղեն ընկնում ա հոր ետեի կուռը ու գալի: Խնձորը դառավ հոր աղաքն ընկավ: Հերը քանի ուղըմ ա խնձորը բռնի, կարում չի: Ընկնում ա փշքի տակը, գալի ետի կուռնը՝ տղա դառնում:

Հերը հետ դառավ, տղին ասավ. — Խի՞ շեկար էրկու խնձորը բռնինք:

Տղեն ասավ.— էկա ոչ:

Գնալիս ճամփին մի ղոչ ա դառնում, հոր աղաքն ընկնում: Հերը զաջիլ ա գալի, ըլի որ ղոչը բռնի, կարիլ չի: Հետ եդ ի գալի եդի կուռնը, ընկնում մի թփի տակ, տղա է դառնում:

Տղեն ասում ա.— Ապի՛, խնձորն էլ՝ ես, ղոչն էլ՝ ես, հիմի ես կդառնամ ձի, ինձ կտան իրեք հարիր մանեթ, սանձը կը ծախես ոչ:

Որ տանում ա մեյդան, Ուխայը դուս ա գալի, ասըմ ա.— Ի՞նչ տամ ձիուն:

— Իրեք հարյուր մանեթ,— ասըմ ա:

Գալիս է իրեք հարյուր մանեթը տալիս է Ուխայը էդ մարգին, ձին առնում ա:

Ասում ա թե.— Սանձքի գինը ի՞նչ տամ:

Ասում ա.— Սանձքը ծախու չի:

Ուխայը ասում ա.— Երկու հարյուր մանեթ տամ, սանձքը ընձի:

Մարդն ասում ա.— Հինգ հարյուր մանեթ տու, սանձքը քի տամ:

Ուխայը հինգ հարյուր մանեթը տալիս ա, առնում սանձքը, տարավ ձիու ճիտն արավ ու քաշելով տարավ դռան կանգնացրեց. աղջկան ասավ.— Աղջի, թուրը դուս պեր:

Աղջիկն ասում ա թե.— Քտնըմ չիմ թուրը:

Ուխայը աղջկանն ասըմ ա.— Դուն արի ձին բռնի, ես երթամ թուրը դուս բերիմ:

Աղջիկը ձիուն ասում ա.— Իմ ճկատին քացի տուր, փախի:

էդ ձին քացի ա տալի ու փախչում:

Ուխայը դուս ա գալի, մտիկ անում, տեսնում, որ ձին ղոչ

դառած գնում ա երկնքում: Ուխալը Ալալ՝ ա դառնում, եղնուցը  
դնում ա, որ դուշը բռնի: Որ դնում մոտենում ա բռնի՝ դուշը մա-  
նիշակ ա դառնում, թագավորի աքոշկով վեր ա ընկնում:

Ուխայն էլ աշուղ ա դառնում, գնում ա թագավորի կշտին ա  
նստըմ, սաղն ածում, թագավորին ասըմ ա.— Ձեռքիդ մանիշակն  
ինձ տուր:

Թագավորն ասում ա.— Տալիս չեմ, փող եմ տալի:

Շատ ասում ա, մանիշակն իրան ա տալի: Տալիս ա իրան մա-  
նիշակը, մանիշակը դառնում ա կորեկ, Ուխայն էլ դառնում ա ճու-  
տը, հավաքում ա կորեկ: Կորեկը մնում ա մինը, ասեղ ա դառնում,  
ճուտն էլ դառնում ա թել՝ ասղի ծակը մտնում, ասեղն էլ կրակին  
ա տալիս, ինքը թելն էլ էրվում ա, ասեղն էլ դուս ա ըլում, պրծնըմ,  
դնում ա...

1 Ինագրում մեծատառով է, անհասկանալի է, թե ինչ իմաստ ունի—Մ. Կ.:

